**21. ՇԱԽՄԱՏԱՑԻՆ ԴԱՐԲԱՍ.** *արևելյան կողմի խոյակի վրա. մուտքի կողմից.*

ՄԱԾԱ ՍՈՒՐԲ ԱՆԱՆԻՆՍ
ԾԻՆ

*Բասմաջյան, № 13։*

**22. ԲԱԴՐԱՏԻ ԴԱՐԲԱՍ.** *մուտքից վեր.*

Ես Բագրատ, որդի Զարոպայ (?) առէսայունին շինեցի զգետնն, որ տանի ի վանն արքոյն Գրիգորի. ի թուին...

*Հրատ. Բասմաջյան, № 112։ Ալիշան, 58—59 (Օրբելին չունի)։*

**23. ԶԱՔԱՐԻԱՅԻ ԲՈՒՐԳ.** *բուրգը փլել է. արձանագրությունը արվում է ըստ Սարգիսյանի.*

Ի :ՈԿԱ: ԶԱԻՐՈՒԹԵԱՄԲՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ԵՍ ՄԱՆԴԱՏՈՐԹԱԽՈՒՑԷՍ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱՀԻ ԶԱՔԱՐԻԱ ՇԻՆԵՑԻ ԶԱՐՁԱՆՍ Վ.ԱՍՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԵՒ ՈՐԴՒՈՑ ԻՄՈՑ:

*Հրատ. Սարգիսեան, 111։ Բասմաջեան, № 39։ Ալիշան, 41։ Գեորգեանց, 30։*

## 2. ՊԱԼԱՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

**24. ՊԱԼԱՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ.*

ԵՍԱԲ···ՍՈՂՈՄ···
ՎԱՐԴԱՊ·Մ····ՇԻՆԵ
ՑԻԶԵԿԵՂԵ··ԻՍ····ԻԹՈ
ԻԱԿԱՆ···ԻԹԵԱՆՀԱ

ԵՍ ԱԲ[Ի]ՍՈՂ[Ո]Մ/ Վ.ԱՐԴԱՊԵՏ ՇԻՆԵ/ՑԻ ԶԵԿԵՂԵ[Ց]ԻՍ Ի ԹՈ/ԻԱԿԱՆ[Ո]ՒԹԵԱՆ ՀԱ-[ՅՈՑ]...

*Հրատ. Գարեգին վրդ. 173։ Բասմաջեան, № 1 և 186։ Մառ,* A, *219։ Օրբելի,* Ш, *82։*
Լուսանկ. *տախտ.* III.

**25. ՊԱԼԱՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. արևելյան պատի վրա. արձանագրված քարը գտնվել է եկեղեցուց արևելք, ձորի մեջ, 1908 թ. պեղումների ընթացքում։*

✣ԵՍԱԲԻՍՈՂ ՈՄ
ՎԱՐԴԱՊԵՄՆԱՌԱ
ԱՅ ՈՐՇԻՆԷՑԻ Ս ՈՒՐԲ
Զ Է Կ Ե ՂԷՑԻ ՍԶԱՅ

ԵՍ ԱԲԻ[Ս]ՈՂՈՄ/ Վ.ԱՐԴԱՊԵՏ ԾԱՌԱ ԱՅ, ՈՐ ՇԻՆԵՑԻ ՍՈՒՐԲ/ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԶԱՅ[Ս]...։

*Հրատ. Օրբելի,* Ш, *82։*
Լուսանկ. *տախտ.* III.

**26. ՊԱԼԱՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. արևմտյան պատի լուսամուտի տակ.*

✝ՈՂՈՐՄԵ
ԱՅԻՆՁՔՍ
ՈՐԴԻԱՅՄԵ
··ԱՅ

ՈՂՈՐՄԵ/ԱՅ ԻՆՁ ՔՐԻՍՏՈՍ/ ՈՐԴԻ ԱՅ. ՄԵ/[Ղ]ԱՅ.

*Հրատ. Բասմաջեան, № 128։*

*27. ՊԱԼԱՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. հարավային պատին. մուտքին կից.*



Ա̅Ծ̅. ԵՍ ԵՀԱՆ ԾԱՌԱՅ ԱՅ.

Լուսանկ. տախտ. XXV.

*28. ՊԱԼԱՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, արտաքուստ, պատի վրա.*

\+ ԵՍ ՈՒՍԷՓ ԲԱԶՄԱՄԵՂ |Ծ|ԱՌԱ ԱՅ̅.

*Հրատ. Բասմաջեան, № 129 (Օրբելին չունի)։*

*29. ՊԱԼԱՏԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ մոտ ընկած մի բեկորի վրա.*

ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԷՍ/ ԻՄ ԳԻՐ Է ՊԱՐՈՆԻՍ....

*Հրատ. Բասմաջեան, № 127 (Օրբելին չունի)։*

## 3. ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵԿԵՂԵՑԻ

*30. ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. հարավային պատի արևմտյան մասում. խորշի մոտ. արձանագրությունը հայտնաբերված է 1911 թ. պեղումների ժամանակ։*



:Զ: ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍՐԲԱՍԷՐ ՏԻԿԻՆ/ ՄԱՄ-[Ն]ՇԱՀԻՆ. ՅԱՂ[ԱՒԹՍ] ՅԻՇ[ԵՑԷՔ]։

Լուսանկ. տախտ. XX.

*31. ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևելյան պատի վրա, հարավային խորշի հյուսիսային եզրին. արձանագրությունը հայտնաբերված է 1911 թ. պեղումների ժամանակ.*



ՅՈՎԱՆ/ՆԷՍ.

*32. ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. արևելյան պատի հարավային մասում. արձանագրությունը թերավարտ է. հայտնաբերված է 1911 թ. պեղումների ժամանակ.*



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅.

*33. ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. հարավային պատի արևելյան խորշը պսակող քարի վրա. արձանագրությունը հայտնաբերված է 1911 թ. պեղումների ժամանակ.*



ՅՈՎԱՆԻՍԻ ՈՂՈՐՄԻ/ Ա̅Ծ̅.

*34. ՀՈՎՀԱՆՆԷՍԻ ԵԿԵՂԵՑԻ. հարավային փոքր բակում. եկեղեցու մուտքից արևմուտք. 1911 թ. պեղումների ժամանակ հայտնաբերված գերեզմանաքարի վրա, որը գտնվել է հյուսիսային լանջին.*